№14 (18)

ISSN 1829-4820

Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ
СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ
Научно-методический журнал

MAIN ISSUES
IN MODERN RUSSIAN STUDIES
Scientific Methodological Journal

2024

ГОСТЕВАЯ СТРАНИЦА

ФОРМИРОВАНИЕ НАВЫКОВ СОЦИАЛЬНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ УЧАЩИХСЯ В ПРОЦЕССЕ ИЗУЧЕНИЯ ИНОСТРАННЫХ ЯЗЫКОВ

Сусанна Паргевовна Асатрян

К.п.н., доцент,
Доцент кафедры педагогики и методики,
Государственный университет имени В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье рассматривается проблема формирования у учеников способностей социальной ответственности в процессе изучения иностранных языков. Соблюдая соответствующие методики, на основе языкового материала, упражнений и практических заданий, освещаются особенности развития способностей социальной ответственности учащихся на разных этапах обучения.

В работе уточняется мысль о том, что только при наличии коммуникативной, кооперативной, интерактивной образовательной среды возможно формирование и развитие вышеперечисленных способностей, одновременно обеспечивающих эффективность процесса обучения. Очевидно, что сегодня социальная ответственность – это ценность, которая помогает ученику наряду со знанием языка приобрести способности воспринимать, осознавать и признавать личные права и обязанности в различных социальных ситуациях, общаться и действовать самостоятельно и независимо в многоязычном и многокультурном мире.

Ключевые слова: социальная ответственность, интерактивная среда, жизненные навыки, кооперативное обучение.

Ներածություն

Սույն հետազոտության նպատակն է քննության առնել և համակողմանիորեն ներկայացնել սովորողների սոցիալական պատասխանատվության կարողությունների զարգացման հիմնախնդիրն օտար լեզուների, մասնավորապես անգլերենի ուսուցման գործընթացում: Խնդիր է դրվում ուսումնասիրել և լուսաբանել ուսուցողական այն համատեքստն ու գործընթացները, որոնք կապահովեն ժամանակակից դասարանում ոչ միայն աշակերտների գիտելիքների ձեռքբերումը, այլև կյանքի հմտությունների՝ հաղորդակցություն, համագործակցություն, քննական/ստեղծարար մտածողություն, ինքնակրթվելու կարողություն, սոցիալական պատասխանատվություն և այլն:

Դասարանում սովորողների սոցիալական պատասխանատվության կարողությունների զարգացմանն են նպատակաուղղված ուսուցողական բազմաթիվ մեթոդներ ու գործընթացներ: Որպես 21-րդ դարի կյանքի հմտություններից մեկը՝ այն օգնում է աշակերտներին լեզվական գիտելիքներին ու կարողություններին զուգահեռ ձեռք բերել բազմալեզու ու բազմամշակույթ աշխարհում ներդաշնակ ապրելու ու գործելու հմտություններ, այլոց հետ հարաբերվելու և գործակցելու ունակություններ: Այն զարգացնում է կարողություններ, որոնք էական նշանակություն կունենան սովորողի համար նաև հետագայում. ինչպես կյանքի տարբեր հանգամանքներում ու իրավիճակներում ինչպես ճիշտ ընտրություն կատարել, որոշումներ կայացնել և ապրել սոցիալական ներդաշնակության մեջ:

Հիմնախնդրի արդիականությունը

Այսօր սովորողների սոցիալական պատասխանատվության զարգացումը հանրակրթության, մասնավորապես լեզվակրթության առանց-

քում է: Այդ հիմնախնդրին անդրադառնում են միջազգային կարևոր կրթական ծրագրերը [4]:

Cambridge University Press-ի հրատարակած «The Cambridge Life Competences»-ում հանգամանորեն քննության է առնվում սոցիալական պատասխանատվությունը, խորությամբ մշակված բնութագրիչների օգնությամբ լուսաբանվում են դրա զարգացումը հատկանշող ենթակոմպետենցիաները: Փաստաթղթում ըստ ուսուցման փուլերի՝ նախակրթական, տարրական, միջնակարգ, բարձրագույն և մասնագիտական, դիտարկվում է սովորողների սոցիալական պատասխանատվության կարողությունների աստիճանական զարգացումը: Հաջորդիվ ներկայացվում և դիտարկվում են սոցիալական պատասխանատվությունը ձևավորող հիմնական ենթակոմպետենցիաները [3]:

Որպես հասարակության անդամ՝ ճանաչել անձնական և սոցիալական պարտականությունները – Ենթադրվում է, որ սովորողը որպես հասարակության անդամ և կամ որպես համաշխարհային քաղաքացի՝ պետք է ճանաչի և ընկալի իր պարտականություններն ու իրավունքները, ինչպես նաև պատասխանատվություն կրի կատարած գործողությունների համար:

Միջմշակութային իրազեկության դրսևորում – Սովորողը կարողանում է ճանաչել և վերլուծել իր և ուրիշների մշակութային առանձնահատկությունները՝ դրական և հարգալից համեմատություններ անելով:

Միջմշակութային իրազեկությունը ենթադրում է նաև այլ մշակույթների մարդկանց հետ համագործակցելու կարողություն: Այս համատեքստում մշակույթի մաս է կազմում տարբեր երկրների, ազգերի, էթնիկ խմբերի, նույնիսկ տարբեր կազմակերպությունների մշակույթը:

Համընդհանուր խնդիրների ճանաչում, ըմբռնում – Ենթադրում է համընդհանուր խնդիրների բացահայտում, ընկալում, քննարկում, լուծումների առաջադրում, օրինակ՝ առողջապահության, մարդու իրավունքների ու շրջակա միջավայրի հետ կապված թեմաների շուրջ: Սովորողը պետք է գիտակցի, որ իր մոտեցմամբ կամ գործունեությամբ կարող է օժանդակել առաջադրված խնդիրների լուծմանը:

ՀՀ հանրակրթության ծրագրային փաստաթղթում՝ Օտար լեզուների առարկայական չափորոշչում, նույնպես շեշտադրվում է սովորողների սոցիալական պատասխանատվության զարգացումը: Այն ներառված է ուսուցման բովանդակային միջուկում ներկայացված թեմաներում ու լեզվանյութում, *ինքնություն* հասկացության համատեքստում [2: 19):

Ամենից առաջ սոցիալական պատասխանատվությունը պետք է կարևորվի ուսուցչի դասապլանում յուրաքանչյուր դասի նպատակը և ակնկալվող վերջնարդյունքները մշակելիս՝ երաշխավորելով լեզվի առավել բովանդակահեն և արդյունավետ ուսուցում [5: 158–159):

Լեզվանյութի ընտրությունը

Ժամանակակից հարափոփոխ կյանքում պարբերաբար ծագում են խնդիրներ, որոնց առնչվում են նաև աշակերտները: Կամա թե ակամա նրանք արձագանքում են արագընթաց, բազմալեզու և բազմամշակույթ աշխարհի մտահոգություններին, մարտահրավերներին ու փոփոխություններին: Հետևաբար, մենք՝ ուսուցիչներս, պետք է օգնենք սովորողներին ճանաչել և ընկալել իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Հանրապետության դպրոցներում մեր կատարած դիտարկումների արդյունքում համոզվել ենք, որ էական նշանակություն ունի սոցիալական պատասխանատվությունը խթանող թեմաների, լեզվա-

նյութի, իրավիճակների, երկխոսությունների, ինչպես նաև բնագիր նյութերի ներմուծումը դասարան: Դրանց ընտրությունը կամ մշակումը պետք է կատարել խնամքով, իսկ ներմուծումը՝ նպատակամետ: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները հաճույքով են ինտեգրվում սոցիալական թեմաների շուրջ քննարկումներին՝ զուգահեռաբար կիրառելով ուսուցանվող լեզուն:

Մենք պետք է ճկուն լինենք թեմաներն ընտրելիս: Սոցիալական պատասխանատվության իրավասությունները պետք է ներառվեն անհատական դասերի պլանավորման մեջ, քանի որ դրանք գեներացնում են լեզվի գործածության բովանդակալից ուսուցողական համատեքստ: Անհրաժեշտ է դասարանում ապահովել բարեհունչ, ոչ դատող ուսուցողական միջավայր, որտեղ հարգվում և գնահատվում է յուրաքանչյուրի կարծիքը: Աշակերտը պետք է գիտակցի, որ ինքը ոչ թե պասիվ սովորող է, այլ սոցիալական ակտիվ դերակատար, նա ունի սեփական կարծիքն արտահայտելու իրավունք, և որ սխալվելը թերություն չէ, և ինքը չի քննադատվի կամ դատվի իր ոչ ճիշտ պատասխանի համար:

Հաջորդիվ ներկայացնում ենք մեր դիտարկումները, որոնք վերաբերում են ուսուցման տարրական և միջին աստիճաններում գտնվող սովորողների սոցիալական պատասխանատվության ձևավորման, զարգացման առանձնահատկություններին:

Ուսուցման տարրական աստիճան

Բոլորս կվկայենք, որ այս տարիքում երեխաները բնատուր հետաքրքրասեր են: Նշանակում է՝ անհրաժեշտ է դասարանում ստեղծել միջավայր, որը կխթանի նրանց հետաքրքրասիրությունը, ներքին մոտիվացիան և որի արդյունքում նրանք կինտեգրվեն ուսուցման գործընթացին: Ամենից առաջ անհրաժեշտ է երեխաներին օգնել պահ-

պանել փոխադարձ հարգանքն ու խոսքի հաջորդականությունը: Երեխաներն ազատ են, նրանք կարող են միմյանց հարցեր ուղղել՝ փորձելով հասկանալ երևույթները, վերլուծել իրավիճակները կամ դրանք գնահատել:

Ուսումնառության այս փուլում առավել արդյունավետ են ոչ ակադեմիական տեխնոլոգիաները, քանի որ փոքրիկները ձգտում են սովորել երգերի, հեքիաթների, կարճ պատմությունների, պարզ տեքստերի ու խաղերի միջոցով: Հատկապես հետաքրքիր են դերային խաղերը: Ուսուցիչը թեման ընտրելիս պետք է հաշվի առնի սովորողների տարիքը, հետաքրքրությունները, ինչպես նաև անձնական ու սոցիալական պարտականություններն ու իրավունքները: Նրանց կարող ենք առաջարկել դերեր՝ եղբայր կամ քույր, որդի կամ դուստր, համադասարանցի, ընկեր, թիմի անդամ և դրանք համապատասխանեցնել յուրաքանչյուր դերի պարտականություններին՝ կիսել պատասխանատվություն, ուշադիր լինել, հարգել ուրիշների զգացմունքները, արդար լինել, հաշվի առնել ուրիշների կարծիքը, օգնել ավելի խոցելիներին, հետևել կանոններին և այլն: Աշակերտները կարող են աշխատել զույգերով կամ խմբերով, որպեսզի դերակատարեն առաջադրված իրավիճակները, օրինակ.

- Դպրոցում դասընկերը կամ տանը ընտանիքի անդամը պատասխանատվությամբ չի կատարում իր պարտականությունները. մայրիկը զբաղված է տնային գործերով, երեխաներից մեկն անմիջապես դադարեցնում է խաղը և օգնում մայրիկին, իսկ մյուսը՝ դեռ մի բան էլ զայրացնում է նրան: **Ձևավորել հոգատար վերաբերմունք սեփական բնակավայրի, համայնքի, ընտանիքի հանդեպ: Ձևավորել հարգանք աշխատանքի և տարբեր մասնագիտությունների հանդեպ:**

- Խանութում ավագ եղբայրը գնումներ է կատարում ընտանիքի համար, իսկ կրտսերը կամակորությամբ պահանջում է, որ իր համար եղբայրը խաղալիքներ գնի: **Ձևավորել գնումներ կատարելիս գումարը խնայողաբար ծախսելու, միայն անհրաժեշտը և պիտանին գնելու կարևորության գիտակցություն:**
- Ձմեռ է, երեխաները չեն ընդունում մայրիկների հորդորը, դպրոց են հաճախում ոչ տաք հագուստով ու հիվանդանում են: **Ձևավորել տարվա և օրվա եղանակին համապատասխան հագուստ կրելու կարևորության գիտակցություն:**
- Նրանք տեսնում են, որ մի քանի երեխա զբոսայգում պաղպաղակ ուտելիս աղտոտում են բնությունը՝ պաղպաղակի թուղթը չնետելով աղբամանի մեջ: **Բերել սեփական բնակավայրի, համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի, ժամանցի վայրերում վարքի հիմնական կանոնների օրինակներ (նաև սեփական փորձից)** [Նույն տեղում: 91–105]**:**

Նմանատիպ առաջադրանքներով պետք է օգնել աշակերտներին՝ գտնել ստացած գիտելիքների և անձնական կենսափորձի միջև կապը, գիտելիքը չպետք է մնա որպես տեսական գաղափարների պարզ մտապահում, այլ դառնա գործնական, կապված լինի կյանքի հետ [1: 17]: Վերոնշյալ առաջադրանքներով կարող ենք օգնել աշակերտներին՝ լեզվական գիտելիքներին ու կարողություններին զուգահեռ ձեռք բերել բազմալեզու ու բազմամշակույթ աշխարհում ներդաշնակ ապրելու ու գործելու հմտություններ, ուրիշների հետ հարաբերվելու և գործակցելու ունակություններ:

Ուսուցման միջին աստիճան

Այս տարիքում սովորողներն ավելի մոտիվացված են, հատկապես, երբ ներկայացվող առաջադրանքներն ու գործնական աշխատանքները համահունչ են նրանց տարիքային առանձնահատկություններին, հետաքրքրություններին: Ուստի անհրաժեշտ է անձնավորել ուսումնառության գործընթացը, այսինքն ուսուցիչները պետք է ուսուցանվող նյութը կապեն սովորողների անձի և նրանց առօրյայի հետ: Որքան երեխաները մոտ կանգնած լինեն ուսուցանվող լեզվանյութի բովանդակությանը, այնքան նրանք ավելի մոտիվացված կլինեն ինտեգրվելու ուսումնական գործընթացին:

Այսօր ՏՀՏ շփման արդյունքում աշակերտներն ունեն շրջապատող աշխարհի մասին առավել տեղեկացվածություն: Մոտիվացված լինելով՝ նրանք ունակ են ուսումնասիրել իրենց և ուրիշներին տարբեր սոցիալական համատեքստերում: Հետևաբար, պետք է խթանել գործնական ուսուցումը դասարանում և դպրոցից դուրս՝ արտադասարանական միջավայրում: Դարձյալ կարևոր է թեմայի ընտրությունը: Պետք է ընտրել թեմաներ, որոնք ավելի ու ավելի մեծ տարածում են ստացել ԶԼՄ-ներում, օրինակ՝ «Կլիմայի փոփոխություն», «Կենդանիների պաշտպանություն», «Աշխարհի խոհանոցներ», «Ընկերություն սոցցանցերում» և այլն:

«**Կլիմայի փոփոխություն**» թեման կարող ենք ուսումնասիրել սովորական դասի, բաց դասի կամ միջոցառման շրջանակում: Այն կարող է ներառել.

- տեքստերի ընթերցում, քննարկում,
- տեսանյութի դիտում, քննարկում,
- պաստառների, սահիկաշարի պատրաստում,
- տարաբնույթ քննարկումներ, բանավեճեր,
- կարճ զեկույց,
- վիկտորինաներ, մրցույթներ:

Վերոնշյալ թեման կարող ենք ներմուծել դասարան նաև վարժությունների կամ գործնական առաջադրանքների միջոցով, օրինակ, հանձնարարել.

- Երեք նախադասությամբ նշել, թե որոնք են այն գործողությունները, որ ցանկանում եք ձեռնարկել կլիմայի փոփոխության դեմ պայքարին աջակցելու համար։
- Ներկայացնել, թե տանը և դպրոցում ինչպես եք խնայում ռեսուրսները, օրինակ. ջուրն ու էներգիան։
- Գրել նամակ խնդրի պատասխանատուներին՝ կոչ անելով շտապ առաջարկություններ ներկայացնել կլիմայական ճգնաժամը հաղթահարելու ուղիների վերաբերյալ։

«**Կենդանիների պաշտպանություն**» թեման ևս արդիական է և երեխաներին հետաքրքրող։ Թեմայի շրջանակում կարող ենք.

- ընդլայնել և ամրապնդել թեմատիկ բառապաշարը, քերականական նյութը,
- զարգացնել բանավոր և գրավոր խոսքը,
- կազմակերպել դերախաղ «Ագարակում», «Անտառում», «Կենդանաբանական այգում» թեմաներով,
- կազմակերպել այց կենդանաբանական այգի, որից հետո երեխաներին հանձնարարել պատրաստել կարճ զեկուցում, պաստառ կամ սահիկաշար «Իմ սիրած կենդանին» թեմայով։

Արդյունքում աշակերտները լեզվական գիտելիքներին զուգահեռ ձեռք են բերում **կենդանիների հանդեպ հոգատար լինելու պատասխանատվություն, շրջակա միջավայրը պահպանելու, կարևորությունը գիտակցելու կարողություն։**

Այս փուլում արդյունավետ են նաև նախագծերը, որոնց թեմաները պետք է համահունչ լինեն աշակերտների տարիքային հետա-

քրքրություններին, նախասիրություններին, իսկ լեզվանյութը՝ նրանց գիտելիքներին ու կարողություններին։ Աշակերտները կարող են աշխատել զույգերով, խմբերով։

«Աշխարհի խոհանոցները» թեման ուսուցանելիս կարող ենք ընդգծել սովորողների սոցիալական պատասխանատվությունը խոհանոցների բազմազանության և խոհանոցը որպես ազգային մշակույթի մաս լինելու գաղափարը ներկայացնելու շրջանակում։

Աշակերտները կյուրացնեն.

- թեմային վերաբերող լեզվանյութը,
- սեփական երկրի հայտնի ուտեստների անուններն ու բաղադրությունը,
- ուսումնասիրվող երկրի և այլ երկրների ամենաճանաչված ուտեստները,
- կենսագրական հետաքիքիր տվյալներ հանրահայտ շեֆ խոհարարների կյանքից ու գործունեությունից։

Որպես ուսումնառության մեթոդ՝ արդյունավետ կլինեն.

- դերախաղը,
- պաստառը «Աշխարհի խոհանոցները» թեմայով,
- նախագիծը՝ ուտեստի պատրաստման տեսահոլովակի ստեղծում, բազմամշակութային ճաշկերույթի կազմակերպում,
- այցը սրճարան և դրան հաջորդող քննարկումը։

Արդյունքում աշակերտները կգիտակցեն միջմշակութայնության և բազմամշակութայնության կարևորությունը՝ որպես ժամանակակից քաղաքացու կարևորագույն կարողունակություն, կձևավորվի նրանց՝ խոհանոցների բազմազանությունը տվյալ մշակութային համատեքստում ընկալելու և արժևորելու կարողությունը [2: 148]։ Զուգահեռաբար նրանք կվերաճանաչեն իրենց ազգային արժեքները և ձեռք կբերեն ոչ

միայն դրանք գնահատելու, այլև օտարներին ներկայացնելու ունակություններ:

Եզրակացություն

Այսպիսով, աշակերտների սոցիալական պատասխանատվության կարողությունների ձևավորմանը նպատակաուղղված ուսուցման մեթոդները, լեզվանյութը, ինչպես նաև ուսուցողական գործընթացները տարբեր են: Ուսուցիչն ընտրությունը կատարում է՝ հաշվի առնելով երեխաների տարիքը, հետաքրքրությունները, մտավոր կարողությունները, ներառյալ բազմաթիվ կրթական, մանկավարժական ու արտալեզվական գործոններ: Կարևորվում է այն փաստը, որ որպես 21-րդ դարի կյանքի հմտություն՝ սոցիալական պատասխանատվությունն արժեք է և այն առանցքային նշանակություն ունի ինքնուրույն անհատի ձևավորման ու զարգացման գործում:

ЛИТЕРАТУРА

1. *Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Թերզյան Գ., Արնաուդյան Ս. և այլն.* Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում: – Երևան: Ոսկան Երևանցի, 2004թ.: – 288 էջ:
2. ՀՀ կրթության բարելավման ծրագրի օտար լեզուներ ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն), Երևան 2020:
3. Cambridge University Press «The Cambridge Life Competences Framework», Introductory guide for teachers and educational managers, Better Learning [Electronic resource]. – Mode of access: https://www.google.com/search?q=cambridge+life+competencies+framework&oq (Date of access: Oct 03, 2024).
4. Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment, Companion Volume, Council of Europe, 2020.
5. *Harmer J.* How to Teach English. An introduction to the practice of English language teaching. Pearson Education Limited, 2010. – 288 p.

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ս.Պ. Ասատրյան

Մ.գ.թ., դոցենտ,
Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության է առնվում աշակերտների սոցիալական պատասխանատվության կարողությունների ձևավորման ու զարգացման հիմնախնդիրն օտար լեզուների ուսուցման գործընթացում: Համապատասխան լեզվանյութի և գործնական առաջադրանքների դիտարկման լուսաբանվում են ուսուցման տարրական և միջին աստիճաններում աշակերտների սոցիալական պատասխանատվության կարողությունների ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները:

Հատկանշվում է այն գաղափարը, որ միայն սովորողակենտրոն, փոխներգործուն ուսուցողական միջավայրի առկայությունն է հնարավոր դարձնում վերոնշյալ կարողությունների ձևավորումը՝ զուգահեռաբար ապահովելով ուսուցման արդյունավետություն:

Ակնհայտ է՝ սոցիալական պատասխանատվությունն արժեք է, որն օգնում է աշակերտին, լեզվական գիտելիքներին զուգահեռ, ձեռք բերել սոցիալական տարբեր իրավիճակներում անձնական իրավունքներն ու պարտականությունները ճանաչելու և կիրառելու կարողություններ՝ ժամանակակից բազմալեզու և բազմամշակույթ աշխարհում ինքնուրույն և անկախ հաղորդակցվելու և գործելու նպատակով:

Բանալի բառեր՝ սոցիալական պատասխանատվություն, փոխներգործուն միջավայր, կյանքի հմտություններ, համագործակցային ուսուցում:

FORMATION OF PUPILS' SOCIAL RESPONSIBILITY SKILLS IN THE PROCESS OF TEACHING FOREIGN LANGUAGES

S. Asatryan

PhD, Associate Professor,
Associate Professor at the Department of Pedagogy and Language Teaching Methodology,
Brusov State University,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

Current article deals with the problem of the formation of pupils' social responsibility skills in the process of language teaching. Different methods based on appropriate language material, exercises and practical tasks are examined to accentuate the peculiarities for the development of students' social responsibility skills at different stages of language instruction.

The paper clarifies the idea that only with the presence of a communicative, cooperative and interactive educational environment it is possible to form and develop the above-mentioned abilities, simultaneously ensuring effectiveness of the teaching process.

It is obvious that today social responsibility is a value that helps the student along with language knowledge acquire abilities to recognize personal rights and responsibilities in different social situations in order to communicate and act independently in a multilingual and multicultural world.

Keywords: social responsibility, interactive environment, life skills, cooperative learning.

Информация о статье:
статья поступила в редакцию 05 октября 2024 г.,
подписана к печати в номер 14 (18) / 2024 – 25.12.2024 г.